INECOBANK

Գնառաջարկի հայտարարություն-հրավեր

1. Ինեկոբանկ ՓԲԸ-ն (իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Թումանյան 17), այսուհետ՝ Բանկ, գնառաջարկների ներկայացման հարցման (ԳՆՀ) ծանուցման միջոցով հրավիրում է իրավաբանական և/կամ ֆիզիզկական անձանց (այսուհետ՝ Մասնակիցներին) ներկայացնելու գնառաջարկներ Դատա Կենտրոնների և սպասարկման ծրագրերի մատակարարման համար:
2. Գնառաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել մինչև 05.09.2024, 17:00

- Էլեկտրոնային տարբերակով՝ procurement@inecobank.am էլ. Հասցեով՝ նամակի վերնագրում նշելով ԳՆՀ կոդը -05092024/Դատա Կենտրոնների և սպասարկման ծրագրեր: Գնառաջարկի փաթեթը անհրաժեշտ է ուղարկել <<rar>> տարբերակով, կոդավորված, իսկ կոդը ուղարկել ԳՆՀ ավարտից հետո procurement@inecobank.am էլ Հասցեով մինչև 06.09.2024թ-ին ժ. 11:00:

- Փաստաթղթային տարբերակով փակ, կնքված ծրարով՝ "Ինեկոբանկ" ՓԲԸ գլխամասային գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, Աբովյան 18 հասցեով՝ ծրարի դարձերեսին նշելով՝
   - ԳՆՀ կոդը -05092024/Դատա Կենտրոնների և սպասարկման ծրագրեր
   - մասնակցի անվանումը,
   - ներկայացման ամսաթիվը,
   - ստացող՝ Ինեկոբանկե ՓԲԸ - Բյուջետավորման և հսկողության բաժին:
3. Հավելյալ տեղեկությունների համար կարող եք դիմել՝
   Կոնտակտային անձինք՝
   *1.Ֆինանսական ստորաբաժանում, գնումների բաժնի ղեկավար Տիգրան Գրիգորյան, +***37433088176**,

   *2.Մասնագիտական հարցերի քննարկման համար՝* Service.Desk@inecobank.am

   Գնառաջարկների ներկայացման հարցումը (ԳՆՀ) չի համարվում հրապարակային մրցույթ: Այն հանդիսանում է շուկայում առկա գնառաջարկների հավաքագրման գործընթաց, որի արդյունքում կարող է ընդունվել որոշում որևէ առաջարկի ընդունման և կամ մերժման վերաբերյալ: Գնառաջարկների ներկայացման հարցման գործընթացը չի կարգավորվում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 463-465, 1043-1044 հոդվածներով և 'Հրապարակային սակարկությունների մասին' ՀՀ օրենքով:
4. Մասնակիցներն ինքնուրույն են հոգում Գնառաջարկի պատրաստման և ներկայացման հետ կապված իրենց ծախսերը, իսկ Բանկը որևէ պատասխանատվություն և պարտավորություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ ԳՆՀ-ի գործընթացի ընթացքից և արդյունքներից:
5. Բանկն իրավունք ունի մերժել Գնառաջարկը, եթե Մասնակիցն ուղղակի կամ անուղղակի կերպով խախտել է Բանկի կողմից սահմանված Էթիկայի կանոնների (Հավելված 1) դրույթներից որևիցե մեկը:
6. Մասնակիցը պետք է ներկայացնի ստորև նշված փաստաթղթերի սկանավորված օրինակները՝ ստորագրված և կնքված լիազոր անձի կողմից՝

   - Գնառաջարկ,
   - Մատակարարման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն,
   - Վճարման պայմանների վերաբերյալ տեղեկատվություն (կանխավճարի չափ),
   - Բանկի կողմից սահմանված Էթիկայի կանոններին համաձայնությունը
   - *(ցանկացած այլ չափանիշ՝ սահմանված Կարգի 6.3.4.3.1 կետով)*:
7. Գնառաջարկը պատրաստելիս անհրաժեշտ է ուղղորդվել ստորև լրացված ցանկով:
8. Գնառաջարկը լրացնելիս Մասնակցին իրավունք է վերապահվում լրացնել/մանրամասել գնառաջարկի ցանկացած կետ/դրույթ՝ թողնելով անփոփոխ պահանջվող նկարագրերը:
9. Գնառաջարկը պետք է ներառի բոլոր ծախսերը և ՀՀ տարածքում գործող պարտադիր վճարումները և հարկերը: Գները անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ դրամով:
10. Գնառաջարկները պետք է լինեն ուժի մեջ առնվազն 30 աշխատանքային օր՝ հաշվարկված գնառաջարկների ներկայացման սահմանված վերջնաժամկետից:
11. Մասնակիցը կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ: Սույն կանոնի խախտման դեպքում՝ տվյալ հայտատուի բոլոր գնառաջարկները մերժվում են՝ առանց հաշվի առնելու վերջիններիս առավելությունները:
12. Վճարումները կատարվում են Ինեկոբանկում բացված բանկային հաշվի վրա, Պատվիրատուի պատասխանատու անձի կողմից վավերացված կատարողական ակտերի հիման վրա:
13. Վերը նշված վերջնաժամկետից ուշ ներկայացված Գնառաջարկները չեն դիտարկվի:

INECOBANK

**<u>ԳՆԱՌԱՋԱՐԿ</u>**

**Ինեկոբանկե ՓԲԸ-ի** Դատա Կենտրոնների և սպասարկման ծրագրեր **գնիարցում**

| Հ/Հ | Անվանում | Ընդհանուր արժեքը ՀՀ դրամ ներառյալ հարկերը |
| --- | --- | --- |
| | | |

*Առաջարկում ենք կատարել մատակարարումը____________ օրացուցային օր ժամանակահատվածում:*

*Պահանջվող կախնավճար_____________________________________դրամ:*

_______________________________________________*Մասնակցի/կազմակերպության  անվանումը*

____________________________________________*Լիազորված ներկայացուցչի պաշտոնը, ստորագրությունը՝*

"        "  _____________*2024թ*
*Կ.տ*